



Արարատյան բակալավրիատ

Արարատյան բակալավրիատի
ավագ դպրոցի
Առարկայական վերջնարոյունքներ

Ռուսաց լեզու

ԱԲ-ի ստանդարտ ուսուցման համար

Ծրագիրը նախատեսված է 2016- 2017 թթ. քննական շրջանի համար

Բովանդակություն

1	Առարկայի նպատակները	3
2	Առարկայի բովանդակությունը.....	4
	Ուսումնասիրվող տեքստային/բովանդակային նյութ	5
	Ուսումնասիրվող քերականական նյութ.....	6
3	Առարկայի գնահատման սկզբունքները	7
	Ընթացիկ գնահատում.....	7

1 Առարկայի նպատակները

ԱԲ-ի ռուսերենի լեզվի առարկայական ծրագրի հիմքում ընկած են բազմալեզվության ու մշակութային բազմազանության արդի գաղափարները, որոնք մենք դիտարկում ենք որպես XXI դարում անհատի համակողմանի կայացման և կրթական առաջընթացի կարևոր նախադրյալ:

Ուսուցումը կազմակերպվում է տարբերակված խմբերում (ըստ լեզվի մուտքային իմացության) և նախատեսում է 210 լսարանային ժամաքանակով դասընթացի արդյունքում լեզվի իմացության մակարդակի (ըստ ԼԻԵՀ) հետևյալ առաջընթաց.

- 0-ից մինչև A1+
- A1-ից մինչև A2+,
- A2-ից մինչև B1+:

ԱԲ-ի աշակերտն ավագ դպրոցում որպես ելքային արդյունք պետք է ապահովի առնվազն B1 մակարդակը (ըստ Ա. Ս. Պուշկինի անվ. Ռուսաց լեզվի պետական ինստիտուտի կողմից մշակված ԼԻԵՀ-ի ռուսական ԹՔՈՒ տարբերակի՝ հետշեմային / I սերտիֆիկացիոն մակարդակ):

Առարկայի նպատակն է հնարավորություն տալ աշակերտին՝

- ձևավորելու պատկերացում ռուսաց լեզվի և մշակույթի սերտ փոխկապակցվածության մասին,
- ձևավորելու պատկերացում ռուս գրականության պատմական զարգացման և առավել նշանավոր ստեղծագործությունների մասին,
- զարգացնել ռուսերենով միջանձնային խոսքային շփման և փոխընկալման իրազեկություն,
- ներկայացնելու ռուսաց լեզուն որպես բազմագործառույթ նշանային համակարգ և հաղորդակցման համընդհանուր գործիք,
- զարգացնելու լեզվական երևույթները հայտնաբերելու, ճանաչելու, վերլուծելու, համադրելու և դասակարգելու հմտությունները,
- զարգացնելու տրամաբանելու, քննադատաբար վերլուծելու և ռուսերենով մտագործունեություն իրականացնելու ունակությունները,
- զարգացնելու վերլուծական ընթերցանության, բանավոր խոսքի ընկալման, տեքստը տարբեր եղանակներով (հարց ու պատասխան, հանպատրաստից մենախոսություն, կարճ հրապարակային ելույթ) վերարտադրելու իրազեկությունները:

ԱԲ-ի ռուսերենի դասընթացի համապատասխան մակարդակի վերջնարդյունքներն ապահովելու համար սովորողը պետք է առնվազն 60%-ով բավարարի նախորդ մակարդակի խոսքային գործունեության բոլոր ձևերին (բանավոր խոսքի ընկալում և արտադրում, ընթերցանություն և գրավոր խոսք) ներկայացվող պահանջները:

2 Առարկայի բովանդակությունը

A2 -ից B1+ մակարդակ	
Թեմա	Վերջնարդյունք
Կարդալու հմտություններ	- ընկալել գրավոր տեքստը և առանձնացնել փաստային/իրադարձային տեղեկությունները, որոշել տեղեկատվության/հանգամանքների կարևորությունը (զլխավոր և երկրորդական), ինչպես նաև հեղինակի դիրքորոշումը
	- բնորոշել գրավոր տեքստի իմաստային կառուցվածքը՝ թեմա, գաղափար(ներ), կերպարային համակարգ, խոսույթի զարգացման առանձնահատկություններ
	- բնութագրել գրավոր տեքստի ոճային առանձնահատկությունները, լեզվական միջոցների գործաբանական ներուժը
	- կազմել կարծիք գրավոր տեքստում արտահայտված մտքերի և նկարագրված դեպքերի/իրադարձությունների/երևույթների մասին և արտածել տեքստային (գեղարվեստական) իմաստներն իրականության վրա
Գրավոր աշխատանքի հմտություններ	- գրավոր վերարտադրել կարդացածն ու լսածը պահանջվող ծավալի շրջանակում նաև տիրապետելով տեքստը կրճատելու հնարքներին (հիմնականի և երկրորդականի զանազանում, կապակցման միջոցների վերադասավորում)
	- կազմել տարբեր ոճի գրավոր տեքստեր՝ կիրառելով յուրաքանչյուրին բնորոշ ձևն ու լեզվական միջոցները և կառուցվածքային կանոնները
	- օգտագործել գրավոր խոսքը որպես հաղորդակցման համապարփակ (մտավոր և հուզական) արտահայտչամիջոց (կարծիք, դատողություն, փաստարկում, եզրահանգում, գնահատում)
Խոսելու հմտություններ	- իրականացնել նպատակադրված բանավոր հաղորդակցում թե՛ մենախոսության և թե՛ երկխոսության ձևաչափով
	- կազմակերպել բանավոր հաղորդակցում օգտագործելով իրավիճակին, նպատակներին, գրուցակիցների սոցիալական և անձնային նկարագրին համապատասխան ռազմավարություններ
	- օգտագործել բանավոր խոսքը որպես հաղորդակցման համապարփակ (մտավոր և հուզական) արտահայտչամիջոց (կարծիք, դատողություն, փաստարկում, եզրահանգում, գնահատում)

A2 -ից B1+ մակարդակ

Թեմա	Վերջնարդյունք
Լսելու հմտություններ	- ընկալել բանավոր տեքստը և դրանից առանձնացնել փաստային/իրադարձային տեղեկությունները, որոշել տեղեկատվության/հանգամանքների կարևորությունը (գլխավոր և երկրորդական), ինչպես նաև խոսողի նպատակները, դրդապատճառները և խոսության վարքագիծը
	- բնորոշել բանավոր տեքստի իմաստային կառուցվածքը՝ թեմա, գաղափար(ներ), խոսույթի զարգացման առանձնահատկություններ
	- կազմել կարծիք բանավոր տեքստում արտահայտված մտքերի և նկարագրված դեպքերի/իրադարձությունների/երևույթների մասին

Ուսումնասիրվող տեքստային/բովանդակային նյութ

Ուսումնասիրվող բովանդակային նյութը կազմակերպվում է առավելապես թեմատիկ սկզբունքով և նախատեսում է իրականության կողմից առաջադրվող և ռուսալեզու գեղարվեստական գրականության և հրապարակախոսության մեջ արտացոլված թեմաների ուսումնասիրություն, ընկալում, վերլուծություն, քննում և արդի իրականության հետ համադրում:

Բովանդակության կազմակերպման առանցքը մարդակենտրոնությունն է, ինչը նախատեսում մարդուն դիտարկելը՝

- «մարդկանց մերձավոր շրջանում» և հասարակության մեջ,
- պետությանը և տարատեսակ մարտահրավերներին դեմ առ դեմ,
- բնության հետ ներդաշնակության և հակամարտության մեջ,
- անդրադարձող տարատեսակ հոգեվիճակներում:

Ստորև տրված են մի քանի թեմաների պայմանական անվանումները, որոնք կարող են փոփոխվել՝ անփոփոխ թողնելով վերը նշված առանցքը՝ բազմակողմանի մարդակենտրոնությունը:

1. «Человек среди людей»
2. Человек перед лицом испытаний
3. «В человеке должно быть все прекрасно: и лицо, и одежда, и душа, и мысли»
4. «Отцы» и «дети»: прервётся ли связь поколений?
5. Социальное равенство: утопия или реальность
6. «Ваше Величество Женщина» (гендерная проблематика)
7. «Диагноз: гений» (гении и таланты)
8. Очистительная сила смеха
9. «И дым отечества нам сладок и приятен»
10. Дорога, которая ведет к храму
11. «Мы в ответе за тех, кого мы приручили»
12. «Узнаю тебя, жизнь! Принимаю! И приветствую звоном щита!»

Ուսումնասիրվող քերականական նյութ

Նպատակ

Քերականության ուսուցումը նպատակաուղղված է խոսակցական գործունեության ձևերը կատարելագործելուն: Այդ նպատակին համապատասխան քերականության ուսուցումն իրականացվում է հմաստային շարահյուսության հիմքի վրա, որը՝

- նպաստում է խոսքային ակտիվ ձևերի (խոսելու և գրելու) զարգացմանը,
- լեզվաճանաչողական հմտությունների կայացմանը,
- ռուսերենի ողջ քերականությունը (ձևաբանությունը ներառյալ) կրկնելուն և, համապատասխանաբար, քերականական հմտությունները պարուրածն սկզբունքով կրկնելուն:

Նյութ

1. Выражение субъектно-предикатных отношений (двусоставные и односоставные предложения, прямой и косвенный субъект, активные и пассивные конструкции). Некоторые типы предложений с ковенным субъектом (предмет и его количественный признак, выражение модальных отношений долженствования и необходимости и др.)
2. Сочинение и подчинение. Сочинительная связь в простом предложении. Однородные члены предложения. Сложносочиненные предложения.
3. Типы подчинительной связи. Использование синтаксической формы слова и формирование словосочетаний. Вводные слова и вставные конструкции.
4. Выражение определительных отношений в простом и сложном предложении. Употребление причастных оборотов.
5. Выражение изъяснительных отношений в простом и сложном предложении.
6. Выражение временных отношений в простом и сложном предложении.
7. Выражение пространственных отношений в простом и сложном предложении.
8. Выражение причинно-следственных отношений в простом и сложном предложении.
9. Выражение условных отношений в простом и сложном предложении. Употребление деепричастий и деепричастных оборотов.
10. Выражение уступительных отношений в простом и сложном предложении.
11. Выражение сравнения в простом и сложном предложении; указание на меру или степень проявления действия или атрибутивного признака.

3 Առարկայի գնահատման սկզբունքները

Ռուսերենի դասընթացը մեկնարկում է հայտորոշիչ ստուգմամբ, որի արդյունքում սովորողները բաժանվում են ուսումնական խմբերի ըստ մակարդակների, ընդ որում հոսքի գերակշիռ մասի համար նախատեսված է A2-ից մինչև B1+ առաջընթացը: Ուսումնառության ընթացքում կիրառվում են առավելապես ձևավորող և հատվածային թվանշանային (քերականական նյութի յուրացման ընթացիկ գնահատում) գնահատումները, ինչպես նաև ամփոփիչ ստուգումը:

Թե՛ ընթացիկ և թե՛ ամփոփիչ ստուգումների գնահատումը պայմանավորված է գնահատման ենթակա խոսքային գործունեության տեսակով և մասնակցության կամ ստուգման ձևով՝ բանավոր հարցում, գրավոր աշխատանք (թեստ, տեքստի վերլուծություն կամ մեկնում, ստեղծագործական աշխատանք և այլն), գործնական առաջադրանք, նախագիծ և այլն: Բոլոր դեպքերում գնահատումը բազմազանեցված է ըստ ձևերի, ձևաչափի (գնահատում ուսուցչի, դասընկերոջ կողմից կամ ինքնագնահատում), նպատակների և բացի բուն ուսումնական խնդիրներից, լուծում է նաև միջանձնային հաղորդակցության և թիմային համագործակցության հմտությունների կայացման խնդիրները:

Ընթացիկ գնահատում

Ընթացիկ գնահատումը հիմնվում է սովորողների ընթացիկ ինքնուրույն աշխատանքների կատարողականի, ինչպես նաև ներգրավվածության և դասապրոցեսում ներդրման վրա (քանակական բաղադրիչ), իսկ որակական առումով նախատեսում է քերականական գիտելիքի թեմատիկ ստուգումների միջինացված և գրավոր ու բանավոր խոսքի առաջընթացային գնահատում: Հմտություններ զարգացնող բոլոր աշխատանքները (ներառյալ ինքնուրույն տնային աշխատանքներն ու դասապրոցեսում ներդրումը) գնահատվում են ձևավորող գնահատման ձևաչափով:

Ընթացիկ գնահատումը կազմում է 40%՝ քանակականի և որակականի 10%/30% հարաբերակցությամբ:

Ամփոփիչ գնահատում

Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին իրականացվում է ամփոփիչ ստուգում, որին հատկացվում է կիսամյակային գնահատականի 60%-ը:

Ամփոփիչ ավարտական ստուգում է համարվում TPKI համակարգի B1 մակարդակի 5 մասից բաղկացած ստուգաթեստը, որի անցողիկ/բավարար արդյունք է համարվում 66%-անոց կատարողականը:

Ամփոփիչ ստուգման ձև է նաև օտար լեզվից ամփոփիչ ատեստավորման պետական քննությունը: